ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈԳԵՒՈՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՐԻՆՎԱԾՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Հնագույն ժամանակներից մինչեւ անտիկ դարաշրջանը)

Հայկական լեռնաշխարհը մարդու ձեւավորման, Հին Արեւելքում քաղաքակրթության եւ մշակույթի առաջացման ու զարգացման համաշխարհային կենտրոններից մեկն է: Ուստի այստեղ կարելի է տեսնել ինչպես բնության բարիքների սպառումից դեպի արտադրող տնտեսաձեւերը եւ նախնադարից դեպի դասակարգային հասարակություն անցնելու եղանակներն ու դրանց զարգացման հաջորդական աստիճանները, այնպես էլ հոգեւոր արժեքների, մասնավորապես կրոնի եւ գաղափարախոսության սաղմնավորման եւ զարգացման երկար եւ բնականոն ուղին:

Հայկական լեռնաշխարհի հարավ-արեւելքում՝ Մեծ Զաբ գետի ավազանում, 1950-ականներին ամերիկյան հնագիտական արշավախումբը՝ հետազոտելով Շանիդարի քարայրը՝հայտնաբերեց հասուն տարիքի մարդկանց եւ դեռահասների թաղումներ, որոնք հետաքրքրական էին նրանով, որ կատարվել էին հատուկ ծեսով՝ նեանդերթալյան մարդկանց շիրիմների վրա ծաղիկներ դնելով, այն էլ մեզանից վաթսուն հազար տարի առաջ: Սա աշխարհում հնագույն թաղման վկայություններից մեկն է, եթե ոչ ամենահինը, եւ առնչվում է հետմահու կյանքի նկատմամբ պարզունակ պատկերացումներին[1]:

Հայ ազգագրական եւ բանահյուսական նյութը, համահունչ լինելով հնագիտական տվյալներին, վկայում է, որ հազարամյակներ առաջ արդեն գոյություն ուներ հավատ բնության մարմնավորված ուժերի նկատմամբ: Հայաստանի գրեթե բոլոր անկյուններում լեռների, գետերի, լճերի անձնավորումը սրա արտահայտությունն է[2]: Մարդը քարի դարի սկզնական փուլերում եւ դեռ երկար ժամանակ սրանից հետո իրեն չէր զանազանում բնության տարերքից ու երեւույթներից, դրանք շնչավորելով ու բանականությամբ օժտելով: Խոսող կենդանիները, այլակերպ գերմարդիկ, պաշտվող

1 Տե՛ս **R. S. Solecki**, *Shanidar, The first flower people, Alfred A.* Knopf, 1971. **Джордж Констэбл**, *Неандертальцы,* М., 1978, էջ 135-149. **Colin Renfrew, Paul Bahn**, *Archaeology: Theories. Methods and Practice,* London, 2001, էջ 390, 443. "The Atlas of World Archaeology", edited by Paul G. Bahn, London, 2006, էջ 27:

2 Տե՛ս **Ղ. Ալիշան**, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, 1895:

համապատկերություններն ու լուսապտուներ դարձած նախնիները, սրբազան ծառերն ու ժայռերը պատկանում են հնագույն հավատալիքների հենց այն ոլորտին, որը խմբավորում էր ֆետիշական, տոտեմական եւ անիմիստական պատկերացումները: Հնագույն շատ ցեղերի եւ ժողովուրդների (այդ թվում նաեւ Հայաստանի բնակչության) ներքնաշխարի վրա հատկապես խոր կնիք են թողել այն պատկերացումները եւ հավատալիքները, որոնք վերաբերում են իր շերտերով տիեզերքի տեսանելի ու հեռավոր մակարդակները մարմնավորող համաշխարհային ծառին[3]: Ներշնչանքի աղբյուր դառնալով՝ դրանք բազմիցս եւ բազմազան կերպով արտահայտվել են հայ բանավոր ստեղծագործության եւ պատկերագրության մեջ՝ այժմեականությունը չկորցնելով ներառյալ մինչեւ միջին դարերը[4]:

Նոր քարի դարից սկսած՝ բնության մայր աստվածուհու կողմից առաջնորդվող անսանձահարելի տարերքները տեղի են տալիս երկրագործության հովանավոր ուժերին: Լինելով հազարամյակներ շարունակ գազանների եւ բուսականության տիրուհի, կնակերպ գերէակը աստիճանաբար փոխակերպվելով՝ դարձավ բնության արգասաբեր ուժերի՝ անձրեւաբեր ամպերի, հողի, կյանքի սերմերի տիրակալը: Նա **Շենգավիթի ոսկի մեդալյոնի** վրա ներկայացված է կլոր լուսապտուի տեսքով՝ իսկ մշակվող հողը նրա գոգնոցն է՝ բաժանված եռանկյունի հողակտորների[5]:

Ընտանի կենդանին հին հավատալիքներում իր պատվավոր տեղն է գրավում **մայր աստվածուհու**[6] եւ քտոնիկ ուժերի կողքին՝ արտացոլելով կոմպլեքսային երկբեւեռ հասարակության ներսում կնքված դաշինքը երկրագործական եւ անասնապահական տնտեսաձեւերի միջեւ. **ցուլն** ու **խոյը** հայտնվում են կավե եւ քարե արձանիկների տեսքով[7] եւ **պաշտամունքային օղակաձեւ օջախների ու պայտաձեւ կրակարանների վրա**[8]:

Պաշտամունքի կենտրոնները, ինչպես հայտնի բոլոր հին ժողովուրդների մշակույթներում, հայոց մեջ անցել են զարգացման երեք հաջորդական փուլ՝ դրանց համապատասխան կառույցներով հանդերձ: Պարզագույնը բնության զանազան ուժերին նվիրված եւ բնության մեջ՝ սարերում, գետերի եւ լճերի ափերին, անձավներում, բնական խորշերի առաջ կանգնեցված՝ անփույթ ի մի բերած եւ կամ ժայռից անջատած տաշած զոհասեղաններն են: Սրանց ուսումնասիրությունը սկսվել է հայագիտության մեջ դեռ

3 Տե՛ս **В. Н. Топоров,** *К происхождению некоторых поэтических символов. Палеолитическая эпоха.- Ранние формы искусства,* М., 1972, էջ 96:

4 Տե՛ս **Ն. Պ. Հակոբյան,** Գրիգոր Լուսավորչի լեգենդի հինարեւելյան եւ միջերկրածովյան զուգահեռները. «Հայաստանը եւ քրիստոնյա Արեւելքը Միջազգային գիտաժողովի զեկուցումներից», հոդվածների ժողովածու: Երեւան, 2000, էջ 25-43: Հայկ Հակոբյան, Գրիգոր Լուսավորչի տեսիլքի հինարեւելյան ակունքները. «Ոչ նյութական մշակույթ, ավանդական բանավոր ժառանգություն», «Գիտելիք եւ խորհրդանիշ, հավատալիք եւ սովորույթ», միջազգային երկրորդ գիտաժողովի հոդվածների ժողովածու, Երեւան, 2007, էջ 26-48:

5 Տե՛ս **Al. I. Shahnazarian, Iv. Mkrtchian,** *The State History Museum of Armenia*, Yerevan, SPb., 1995, fig. 6:

6 Տե՛ս "У подножья Арарата", Каталог выставки, Санкт-Петербург, 2008, էջ 36:

7 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, Երեւան, 1971, էջ 150. Al. I. Shahnazarian, Iv. Mkrtchian, The State History Museum of Armenia, էջ 14, նկ. 9, 10. **Е. Байбуртян,** *Последовательность древнейших культур Армении на основании археологического материала,* Ереван, 2011, էջ 54, նկ 16:

8 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», էջ 135. **Е. Байбуртян**, *Последовательность древнейших культур Армении,* էջ 35, նկ. 6,7, էջ 52, նկ. 14, 15:

Օջախի պաշտամունքային պատվանդանՎառնուտ, մ.թ.ա. XXVI դ.

Պաշտամունքային օջախ Շենգավիթից մ.թ.ա. III հազ. առաջին կես

Գեղարոտի սրբարանը. մ.թ.ա. XV դարի վերջ - XII-ի առաջին կես, զոհասեղանի ընդհանուր պատկերը

Պաշտամունքային օջախ Շենգավիթից մ.թ.ա. III հազ. առաջին կես

Տեղադրան Ջրահովտի սրբարանից մ.թ.ա. IV հազ.

Տաճարի մոդել՝ գտնված Ենոքավանի տաճարական համալիրի պեղումներից



Դվինի վաղ երկաթի դարի առաջին սրբարանում գտնված զոհասեղան-կոթողը



Դվինի վաղ երկաթի դարի երկրորդ սրբարանում գտնված զոհասեղան-կոթողը

Դվինի վաղ երկաթի դարի երրորդ սրբարանում գտնված զոհասեղան-կոթողը

Վիշապ, Գեղամա լեռներ, մ.թ.ա. II հազ.,
այժմ՝ Սարդարապատի թանգարանի բակում



Օշականի ուրարտական և վաղ հայկական դարաշրջանների առաջին և երկրորդ պալատական-տաճարական համալիրների ընդհանուր հատակագիծը



Ալթին-թեփեի տաճարական համալիրի զոհասեղաններից մեկը
մ.թ.ա. VIII դ.

ԺԹ. դարում, սակայն հնագիտական ամրագրումը եւ վերահիմաստավորումը տակավին նոր բնագավառ է:

Զարգացման վերջին կամ երրորդ փուլը ժամանակով համապատասխանել է պետական միավորումների կամ ցեղապետությունների եւ սրանց կիզակետ դարձած խոշոր բնակավայրերի՝ քաղաքային կենտրոնների առաջացմանը, թվագրվելով, հավանաբար, սկսած Վաղ բրոնզի դարից՝ Ք. ծ. ա. Դ. հազարամյակի երկրորդ կեսից - Գ.-ի սկզբներից մինչեւ Վաղ երկաթի դարի վերջերը՝ Ք. ծ. ա. Թ.-Ը. դդ.: Այս փուլում արդեն առկա են ծածկի տակ առնված սրբազան կառույցներ՝ տաճարներ, որոնց ներսում զոհասեղանին հատկացված էր ամենահանդիսավոր եւ միայն ընտրյալների համար մատչելի սենյակը կամ սրահը:

Այս երկու փուլերն անջատված են երրորդով՝ միջանկյալ վիճակ ներկայացնող մի հորինվածքով, որը զանազան տեսք ունեցող եւ բացօթյա դրված զոհասեղանն է, սակայն ի տարբերություն առաջին փուլի՝ առնված որոշակի պատնեշի մեջ:

Կարեւոր է ի նկատի առնել, որ անգամ քաղաքակրթության թեւակոխելուց հետո Հայաստանի եւ Մերձավոր Արեւելքի բնակիչները ծածկի տակ առնված եւ բարդ ներքին բաժանումների ենթարկած տաճարական կառույցներից բացի շարունակում էին իրենց սրբությունները տեղադրել ու երկրպագել բաց երկնքի տակ՝ զոհասեղանների կամ պատնեշված զոհասեղանների տեսքով: Այլ կերպ ասած՝ մի անգամ արդեն ստեղծված բացօթյա պաշտամունքային վայրերը շարունակում էին գործել երրորդ փուլի կառույցներին զուգընթաց: Հետեւաբար, մեր օրերում տարածաշրջանի զանազան կետերում հայտնի դարձած առաջին եւ երկրորդ փուլի վկայությունները կամ հնագույն զոհասեղաններ են կամ սրանք իրենց սահմաններում ամփոփող եւ նույն սկզբունքով հաջորդ դարերում կառուցված սրբավայրեր, որոնք հաճախ, առավել եւս ելնելով հնագույն սրբությունների շարունակական շահագործման սկզբունքից, դժվար է թվագրել որոշակի դարով կամ անգամ դարաշրջանով:

Համեմատական նյութը ցույց է տալիս զարգացման նույն միտումները եւ դրսեւորումները ինչպես Հայաստանում, այնպես էլ հեռու ու մոտ այնպիսի երկրներում, ինչպիսիք են հին Իրանը եւ Հունական աշխարհը: Սկզբում այստեղ պաշտամունքի առարկաներ էին կիսամշակ քարերը, բնական ժայռերը, ծառի կոճղերը, սարերում փարթամ սաղարթով աչքի ընկած ծառերը, օրինակ, կաղնին: Հունական հայտնի հերմաները մի տեղ կուտակված քարեր էին կամ սյունանման կոթողներ: Հետո սրանք շրջափակվում են. առանձին դեպքերում սրբությունը, օրինակ, Զեւսին նվիրված կաղնին, շրջապատվում է նրա շուրջ արտազծած համակենտրոն ատրճանակներով, որոնք, նման ցածր քառակող բուրգերի՝ բոլոր կողմերից ապահովում էին վերելք դեպի սրբազան այս ծառը:

Ապա հերման հայտնվում է հունական բացօթյա թատրոնի կենտրոնում՝ խոռոչում, որի շուրջ ցուցադրվում էին ներկայացումներ, կատարվում երգ ու պարով ուղեկցվող ծեսեր, նրա վրա հեղում էին ձիթապտղի յուղ կամ գինի: Վերջապես, կուռքերը, որոնց գեղարվեստական գագաթնակետը դասական քանդակներն էին, հայտնվեցին ծածկի տակ՝ տաճարների ամենասրբազան եւ խորունկ տեղադրված հատվածում:

Վերն ուրվագծած վաղագույն փուլի զոհասեղանները Հայաստանում՝ ամենուրեք սփռված մասամբ փաշված եւ այնուհանման, կոնաձեւ կամ բրգաձեւ մենհիրներն են: Դրանք տեղ-տեղ կազմել են մենհիրների «անտառներ», եւ որքան էլ ոչնչացվել են մշակութային բնապատկերի հետագա ձեւափոխման արդյունքում, միեւնույն է՝ հասել են մինչեւ մեր օրերը[9]: Մյուսը ձկնանման կոթողներն են, որոնք խիստ պայմանական ընդունված է կոչել «վիշապներ»[10]:

Հայաստանից հարավ-արեւելք՝ Իրանի Քերմանշահ կենտրոնից ոչ հեռու պեղված Գանջդարեհ բնակավայրի չորրորդ շերտում, որը վերաբերում է Ք. ծ. ա. Ը. հազարամյակին, ի հայտ է գալիս սրբազան անկյուն. սա պաշտամունքային շեշտված նշանակությամբ խորշ է՝ որտեղ բարձր դիրքով ամրացված են երկու ոչխարների գանգեր: Տվյալ դեպքում գործ ունենք պարզունակ զոհասեղանի հետ[11]: Նույն Ը. հազարամյակում Հայկական լեռնաշխարհի հարավում՝ Տիգրիսի վերին հոսանքում, Արղանա քաղաքից 7 կմ հարավ-արեւմուտք կար մի բնակավայր, որը պայմանականորեն կոչված է Չայոնու-Թեփեսի: Այստեղ արդեն առկա են չորս ստանդարտ տիպի շինություններ: Սրանցից մեր խնդրի համար ավելի հետաքրքրական է երրորդը՝ ուղղանկյուն հատակագծով, քարի հիմքերով եւ հում աղյուսից պատերով «բջջաձեւ» տիպի կառուցվածքը. նման շենքերից մեկում գտնվել են վերնամասի ճակատային հատվածում գերանների ծայրեր նմանակող եւ հարթ տանիքով ծածկված տան երկու մանրակերտեր[12]: Մի երեւույթ, որը պետք է կապել պաշտամունքային շինությունը սրբապատկերի վերածելու քայլի հետ: Իրանական սարահարթի նշյալ հուշարձանի եւ առավելապես Փոքր Ասիայի հարավում հայտնաբերած, Ք. ծ. ա. Է. հազարամյակի վերջում առաջացած, Չաթալ-Հույուք փաճարական քաղաքի թվով մոտ քառասուն սրբարանների զարգացած պաշտամունքային ճարտարապետությունը եւ պատկերագրությունը՝ որմնանկարներն ու բարձրաքանդակ կուռքերը[13], անուղղակի մատնանշում են, որ հավատալիքների նման դրսեւորումների եւ հասարակական արժեւորման ուղին պետք է որդեգրած լիներ նաեւ հարեւան Հայաստանը:

1994 թ. Կոստանդնուպոլսի Գերմանական Հնագիտական ինստիտուտի սկսած

---

9 Այսօր էլ հետաքրքրության առարկա են Սիսիանի մոտ՝ Զորաց-քարերի (**Ե. Լալայան**, Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երեւան, 1931, էջ 66, էջ 63-ում՝ նկ. 14: **П. М. Геруни**, *Доисторическая каменная обсерватория Карахундж-Карении. "Доклады национальной Академии наук Арменни",* Астрономия, 1998, թ. 4, էջ 307-332. **Օ. Խնկիկյան,** Սիսիանի Զորաքարերը. «Հայաստանի բնություն», 1984, թ. 4, էջ 33), Շամիրամի փարածքում կանգուն մնացած (**Ե. Լալայան**, Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, էջ 66, էջ 64 եւ 65-ում՝ նկ. 15 եւ 16) եւ բազմաթիվ այլ հնավայրերում տեսանելի մենհիրները: Հարյուրավոր մետր երկարությամբ ձգվող երեք զուգահեռ շարքերով մենհիրների պատնեշներ են հիշեցնում Հարթաշենի, Աշոցքի կենտրոնի, Ազատանի եւ այլ վայրերի նմանատիպ հուշարձանները:

10 Վիշապների մասին մանրամասն տե՛ս ստորեւ:

11 Տե՛ս **J. Mellaart,** *The Neolithic of the Near East,* London, 1975, էջ 75-79. «Հայկական ճարտարապետության պատմություն», Երեւան, 1996, էջ 17-18:

12 Տե՛ս «Հայկական ճարտարապետության պատմություն», էջ 20:

13 Տե՛ս "История древнего Востока. Зарождение древнейших классовых обществ и первые очаги рабовладельческой цивилизации", ч.I, Месопотамия, под ред.И.М.Дьяконова, М., 1983, էջ 51-56, նկ. 12a. Laurie Schneider Adams, Art Across Time, vol. I, McGraw-Hill, 1999, էջ 50, նկ. 3.3, 3.4:

աշխատանքները (Կ. Շմիդտի կողմից) Հայկական լեռնաշխարհից անմիջապես հարավ՝ Սանլիուրֆայի փարածաշրջանում, վեր են հանել իրենց կատարումով շատ զարգացած, սակայն զարմանալիորեն հին, Ք. ծ. ա. ԺԱ.-Թ. հազարամյակների սահմանագլխին առաջացած հնավայրերից մեկը՝ Գյոբեկլի-թեփեն («Պորտաբլուր»)[14], ցույց տալով, որ հասարակությունն արդեն շատ հեռավոր անցյալում հասել էր համակենտրոնացման եւ հոգեւոր զարգացման այնպիսի աստիճանի, որ ի վիճակի էր Նոր քարի դարի նախնական փուլում հիմնել յուրահատուկ մոնումենտալ բացօթյա սրբարաններ: Առնվազն յոթ ուրվագծված շրջանաձեւ կամ ձվածիր կառույցներից առայժմ պեղված է չորսը. սրանք ունեն 10-ից մինչեւ 30 մ տրամագիծ: Երկու համակենտրոն շրջաններ հիշեցնող շինություններից յուրաքանչյուրի պատերը կառուցվել են անմշակ քարերից եւ ունեն 180 սմ բարձրություն: Արտաքին եւ ներքին շրջաններ կազմող պատերի մեջ ամրացված են մոտ 300-330 սմ բարձրությամբ T-աձեւ կոթողներ, որոնցից շատերը զարդարված են կենդանիների ուռուցիկ պատկերներով (աղվեսներ, առյուծներ, ցուլեր, վարազներ, կռունկներ, բադեր, կարիճներ, մրջյուններ, սարդեր ու օձեր): Ուշագրավ է, որ սրանք ոչ ընտանի, մարդու համար գերազանցապես վնասակար կենդանիներ են: Գիտնականները կասկածում են, թե արդյոք այս կոթողները ժամանակին ծառայե՞լ են որպես նեցուկ տանիքի համար, թե՞, որ ավելի հավանական է, կանգնեցված էին բաց երկնքի տակ: Կառույցների կենտրոնում՝ հարթակների վրա կանգնեցված են նման T-աձեւ, սակայն շատ ավելի խոշոր չափի կոթողների զույգեր: Դրանց նմաններն էլ գտնված են քարհանքում՝ կիսամշակ վիճակում, որոնցից մեկի բարձրությունը հասնում էր ավելի քան 9 մետրի: Կառույցների հատակները պատրաստվել են թրծած կրաքարից: Արտաքին պատերի ներսի կողմից՝ ողջ երկայնքով կառուցվել են ցածր նստարաններ: Տեղում կամ մոտակայքում չի հայտնաբերվել որեւէ բնակավայր, ուստի ակնհայտ է, որ այս հուշարձաններն ունեցել են շեշտված պաշտամունքային նշանակություն:

Հիշյալ կոթողները զարմացնում են իրենց մշակման կատարելությամբ եւ վիթխարի չափերով, թեեւ պատրաստված են պարզունակ կայծքարի գործիքներով եւ տեղաշարժված քարհանքից դեպի սրբարան ավելի քան 400 մետր: Դրանք խիստ սխեմատիկ վերարտադրում են մարդանման էակների՝ վերից վար նմանակելով գլուխը, թեւերը, ձեռքերը, վարտիքը, ազդրերից վերեւ կապած գոտին: Այս կենտրոնական կոթողների վրա կախված էին զոհաբերված կենդանիների մորթիներ, իսկ կոթողների առաջ հարթակի վրա դրվում էին նվիրատվություններ:

«Պորտաբլրի» կառույցները թվագրվում են երկու փուլով. հնագույնները, որ լավ

14 Տես **K. Schmidt,** *Frühneolithische Tempel. Ein Forschungsbericht zum präkeramischen Neolithikum Obermesopotamiens. -In: Mitteilungen der deutschen Orient-Gesellschaft 130*, Berlin 1998, էջ 17-49. **K. Schmidt,** *Zuerst kam der Tempel, dann die Stadt. Vorläufiger Bericht zu den Grabungen am Göbekli Tepe und am Gürcütepe 1995-1999. -Istanbuler Mitteilungen 50 (2000)*, էջ 5-41. **K. Schmidt,** *Göbekli Tepe, Southeastern Turkey. A preliminary Report on the 1995-1999 Excavations.- In: Palèorient CNRS, Ed.,* Paris, 2000, էջ 26.1, 45-54. **Andrew Curry,** *Seeking the Roots of Ritual.- Science, 319,* 18 January 2008, էջ 278-80. **Sandra Scham,** *The World's First Temple.- Archaeology,* 61.6, November/December, 2008. **K. Schmidt**, *Göbekli Tepe - The Stone Age Sanctuaries: New Results of Ongoing Excavations with a Special Focus on Sculptures and High Reliefs.- Documenta Praehistorica, XXXVII*, 2010, էջ 239-256. **Charles C. Mann,** *The Birth of Religion: The World's First Temple.- National Geographic*, vol. 219, թ. 6, June 2011, էջ 34-59:

են մշակված, ստեղծվել են մեզանից 12.000-9.000 տարի առաջ: Այս ժամանակին է վերաբերում T-աձեւ կոթողների եւ կենդանիների քանդակների մեծ մասը: 9.000-8.000 տարի առաջ կառուցած երկրորդ փուլի շինությունները, որ վերաբերում են Նախակերամիկական «Բ.» փուլին, ունեն ավելի անփույթ տեսք: Սրանից հետո կառույցները կանխամտածված թաղվել են հողի վեց մետրանոց շերտով եւ մարդիկ լքել են այս սրբավայրը[15]:

Մի քանի կիլոմետր հեռու, Եփրատի հոսանքով Սամոսատից քիչ ներքեւ՝ Հայդելբերգի համալսարանի հնագետները Հարալդ Հաուպտմանի գլխավորությամբ, 1983-1991 թթ. հայտնաբերել են նման մի այլ սրբատեղի՝ Նեւալի-Չորին: Այն նախորդից հինգ հարյուր տարով ավելի երիտասարդ էր եւ կառուցողական առումով շատ ավելի պարզունակ, սակայն այստեղ էլ գտնվել են T-աձեւ կոթողներ, կենդանիների արձաններ, ինչպես նաեւ մարդկանց պատկերներ: Այս սրբատեղին ներկայումս արդեն ծածկում են Սամոսատի ջրամբարի ալիքները:

Մեծ գետերի ավազաններում նախորդ դարի սկզբներից հնագետների հայտնաբերած բնական եւ արհեստական բլուրները՝ բոլորաձեւ, շրջանաձեւ եւ ուղղանկյուն հատակագծած շենքերով հանդերձ, կասկած չեն թողնում, որ արդեն Նոր քարի դարից (Ք. ծ. ա. Է. հազ.) սկսած Հայկական լեռնաշխարհում եւս տաճարները հասարակության քաղաքական եւ տնտեսական կյանքի կազմակերպիչ կենտրոններ էին:

Նախնադարի ավարտական փուլում՝ Վաղ բրոնզի դարում, Հայաստանը Դաղստանի, Ասորիքի եւ Պաղեստինի հետ ընդգրկված էր Շենգավիթյան մշակույթի տիրույթներում: Տասնյակ «նախաքաղաքներում» բնակելի, տնտեսական ու հասարակական կառույցների կողքին այստեղ էլ առկա են սրբարաններ: Երեւանից հարավ՝ Մասիսի մոտ, բլրի վրա տեղադրված Ջրահովիտի հնավայրում, որի պեղումներն ընթացել են շուրջ երեսուն տարի, վեր են հանված եւ միմյանց վերադրված բազմաթիվ հնագիտական հորիզոններ. ամենահները եւ ստորինները սկիզբ են առել Ք. ծ. ա. Դ. հազարամյակից եւ հետզհետե ծածկվելով հաջորդ դարաշրջանների շերտերով, կաղապարվել Ք. հ. ԺԷ. դ.: Ահա այստեղ՝ վաղբրոնզեդարյան (Ք. ծ. ա. Դ. հազ.) տաճարական համալիրի մի հատվածում բացվել են երեք համակենտրոն շրջանների ձեւ ունեցող կառույցներ, որոնց կենտրոնում կանգնած էր լայնադիր գլանաձեւ մույթը՝ զգաթին շարժական զոհասեղանով[16]:

Վաղ բրոնզի դարաշրջանին պատկանող մի այլ բնակավայրի՝ Էջմիածնից 4 կմ հարավ գտնվող Մոխրաբլրի փողոցների խաչմերուկում՝ կենտրոնական հրապարակի վրա, վեր էր խոյանում ուղղանկյուն հատակագծով քարաշեն բարձր աշտարակը: Սրբազան աշտարակը 4.5 մ բարձրությամբ կանգնեցված էր խիտ կավե բարձի վրա: Աշտարակի 5. 4 մ չափի երկայնական կողմերը ձգված էին ուղիղ արեւելք-արեւմուտք առանցքի

15 Գեոմագնիսական սարքերով հետախուզումները պարզել են, որ տեղում կան էլի փասնվեց շինություններ եւ առնվազն երկու հարյուր T-աձեւ կոթող:

16 Տե՛ս **Է. Խանզադյան,** Ջրահովիտի պեղումների արդյունքները. «ՀՀ 1989-1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան. զեկուցումների թեզիսներ» (ԴՀԱԱԳՆ), Երեւան, 1991, էջ 11-12: **Ա. Քալանթարյան, Ն. Մելքոնյան,** Հնագիտական աշխատանքները Հայաստանում, Երեւան 1990-2003 թթ., Երեւան, 2005, էջ 40-41, նկ. 25:

երկայնքով: Կարեւոր ցուցիչ է, որ աշտարակը դարեր շարունակ վերակառուցվել ու ծառայել է նույն նպատակին, որ շատ բնորոշ է սրբավայրերին: Տուֆից եւ մասամբ բազալտից քարի հորիզոնական շարքերից երեքը հրապարակի բարձրացող գետնի տակ հայտնվելու պատճառով պահանջել են ապահովելու համար աշտարակի իշխող դիրքը, կառուցողական երկրորդ փուլում այն քիչ բարձրացրել են, նրա վերնամասին դնելով քարի նոր մեկ-երկու շարք: Նույն կառուցողական շրջանում աշտարակի առաջ՝ հրապարակի մակերեւույթին դրվել ու գլաքարերով հիմնավոր ամրացվել են ուղղաձիգ սալերից կոթողներ: Աշտարակը երրորդ փուլում ոչ միայն համալրվել է դեպի վեր, այլեւ մյուս կողմերից. երկարությունը 5.4 մետրից դարձվել է 7.4 մ, իսկ լայնքը հասել է 5.5 մետրի: Աշտարակին կից կային ավելի ցածր աղյուսաշեն կառույցներ[17]:

Բոլոր փուլերում էլ աշտարակի գագաթին՝ լայնակի եզրերից մեկին մոտ ու զուգահեռ դրված էր որձաքարի զանգվածեղ ժայռաբեկորից քանդակված զոհասեղանը /0.7 x 1մ լայնությամբ եւ 3.9մ երկարությամբ/, որի հետ միասին արդեն առաջին փուլում, աշտարակը, հավանաբար, ունեցել էր 9-10 մ բարձրություն եւ գավառի բնակչության գլխավոր հավաքատեղին ու սրբավայրն էր[18]:

Մոխրաբլրի աշտարակը նման է Փոքր Ասիայի Բեյջեսուլթան հնավայրի հինգերորդ շերտի սրբազան կառույցին: 3.5 մ ընդհանուր բարձրությամբ այս կոթողը սպեղծվել էր միմյանց վրա կանգնեցնելով երեք հսկա ժայռաբեկորներ[19]:

Նման աշտարակների ծիսական գործառույթը շարունակվում է նաեւ Վաղ երկաթի դարում եւ հաջորդ դարաշրջաններում՝ ուրարտական եւ անտիկ, սպանալով յուրահատուկ մասնագիտացում՝ կապված դամբանային մոնումենտալ կառույցների հետ, ինչպես կտեսնենք ստորեւ:

Ք. ծ. ա. ԻԸ.-ԻԶ./ԻԴ. դարերի սահմաններում գոյություն ունեցած եւ երկու շինարարական հորիզոններով ներկայացված, Շիրակի հյուսիսում գտնված Մեծ Սեպասարի հուշարձանը այս ժամանակի ծածկի տակ առնված սրբարաններից մյուսն է: Հնագետների ջանքերով 2005 թ. բացվեց սրբարանի արեւելյան կեսը, իսկ մի տարի անց՝ արեւմտյանը, իր հյուսիսային ու արեւմտյան պատերով հանդերձ (քառակուսիներ D-4 եւ C-4)[20]: Սրբարանի նեղ մուտքը արեւմտյան կողմում էր, իսկ հյուսիսային պատը հարում էր մի միջանցքի: Սրբարանի պատերը կառուցված էին միջին չափի կանոնավոր համակցված քարերից: Սրբարանը հետագայում անցել էր միջնադարում կառուցված մի շենքի տակ: Վերջինիս արեւմտյան պատից ավելի ներքեւ թափանցելով, հնագետները

17 Տե՛ս **Գ. Ե. Արեշյան, Կ. Կ. Ղափադարյան,** Հայկական լեռնաշխարհի եւ հարակից շրջանների ճարտարապետությունը վաղ բրոնզի դարում. «Հայկական ճարտարապետության պատմություն», հ. 1, Երեւան, 1996, էջ 37, աղյուսակ 4, էջ 66:

18 Տե՛ս **Г. Е. Арешян, К. К. Кафадарян,** *Рождение монументальной архитектуры на территории Армении (первая половина III... тысячелетия до н. э.).- В кн.: "Памятники культуры. Новые открытия",* Ежегодник. 1974, М., 1975, էջ 397-403:

19 Տե՛ս **W. Lamb,** *Some Early Anatolian Shrines.- Anatolian Studies*, 1956, vol. VI. **S. Lloyd, J. Mellaart,** *Beycesultan Excavations*, անդ, pl. Xb:

20 Տե՛ս **Լարիսա Եգանյան,** Մեծ Սեպասարի 2006 թ.պեղումները. «Գիտական Աշխատանքներ», Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, IX, Գյումրի, 2006, էջ 68, տե՛ս բնակավայրի պեղված մասի հատակագիծը էջ 63-ում:

բացեցին մի հեղաքրքիր միջավայր: Հնագույն կառույցի կավածեփ հատակից 15 սմ ավելի բարձր մակարդակի վրա բացվեց մի թանձր ու հաստ մոխրաշերտ, որի մեջ զանազանվում էին ածխի կտորներ եւ մի կավե հալոց: Իսկ սրանից անմիջապես ներքեւ՝ սրբարանի կավածեփ հատակի վրա, երեւան եկան զոհաբերված վեց գայլերի գանգեր. այստեղ կենդանիների ստորին ծնոտները պակասում էին, սակայն նախորդ տարվա պեղումներից դրանք հայտնաբերվել էին հատակի մակերեւույթին՝ քիչ սրանցից հեռու: Գանգերի մոտ սփռված էին սեւ փայլեցված արտաքինով խեցանոթների բեկորներ, իսկ քիչ հեռու՝ դրված էր մի քարե աղորիք: Գայլերից 60 սմ հեռու՝ սրբարանի հյուսիսային պատի դիմաց, գտնվում էր մոխրով, խեցանոթների բեկորներով, քարիդարյան գործիքների նմանվող արտեֆակտերով լի մի փոս, այստեղից վեր հանվեց նաեւ կավե հենակ[21]:

Բերված օրինակները հավաստում են, որ հավատալիքներից դեպի ավելի հասուն՝ կրոնական գաղափարախոսությունն անցնելու գործընթացների սահմանագծում արդեն որոշակի ձեւավորվել էին երկու տիպի պաշտամունքային համալիրներ՝ բացօթյա եւ ծածկի տակ առնված սրբավայրեր: Սա համատարած երեւույթ էր ողջ Հայկական լեռնաշխարհում՝ Ախալցխայից (Ամիրանիս-գորա) մինչեւ Արարատյան դաշտի երկրագործական գոտին (Շենգավիթ, Քյուլ-թափա, Մոխրաբլուր) եւ Արածանիի ավազանի բնակավայրերը (Քորուջութեփե): Ընդ որում, մոնումենտալ կոթողները, դիցուք, աշտարակները, բացօթյա տեղադրություն ունեին հսկայական չափերի եւ իրենց շուրջ մեծ թվով երկրպագողների հավաքելու պատճառով, եւ այլեւս չէին նույնանում սրբատեղիների զարգացման ստորին մակարդակի պաշտամունքային կառույցների հետ:

Վաղ բրոնզի դարում՝ Հայափանի տարածքի մինչ այդ մեզ հայտնի պարզունակ եւ համեստ չափերով թաղման կառույցները ստանում են պատկառելի տեսք եւ որոշակի հորինվածք: Համայնականների շաբաթներ, երբեմն էլ ամիսներ տեւած ծանր աշխատանքի հետեւանքով վեր խոյացած վիթխարի արհեստական դամբանաբլուրներն ու նրանց ներքո ամփոփված դամբարանները դառնում են բարդ սրբազան համալիրներ, պաշտամունքային նպատակներով՝ ինչպես իրենց ստորգետնյա, այնպես էլ վերգետնյա հատվածներով ծառայելով երկար ու ձիգ դարեր:

Հայաստանի մենհիրները եւ Մոխրաբլուրի վերոհիշյալ աշտարակը յուրահատուկ զարգացում են ստանում թաղման կառույցներում: Ուշ բրոնզի եւ հատկապես վաղ երկաթի դարի դամբանադաշտերում՝ բարձր դամբանաբլուրների գագաթին կանգնեցվում էին սյունանման կոթողներ, որոնց առաջ կատարվելու էին թաղմանն առնչվող զանազան արարողություններ՝ ուղեկցվելով զոհաբերությամբ:

Աշտարակից ոչ հեռու՝ Շամիրամի դամբանադաշտում հարյուրավոր մենհիրներ են կանգնեցվել գերեզմանների վրա եւ շրջապատվել քարի օղակներով: Լավ մշակված այս քարերի վրա նշմարելի են կենդանիների քանդակներ: Նշանավոր հնագետ Հ. Մարտիրոսյանը ժամանակին հանգել է այն եզրակացության, որ նման

21 Տե՛ս **Լարիսա Եգանյան**, Մեծ Սեպասարի 2006 թ.պեղումները, էջ 69, 75:

օղակված մենհիրները յուրահատուկ բացօթյա տաճարներ էին՝ նվիրված նախնիների պաշտամունքին[22]:

Հավանաբար նման պատկեր էին ներկայացնում Լեռնային Արցախի որոշ հնավարեր, Խոջալուի եւ նրան հարեւան Նորագյուղի որոշ դամբարաններ, որոնց վրա դրված էին մենհիրներ: Խաչ-թեփեի դամբանաբլրի մոտ կանգնեցված էին երկու ահռելի սյուներ[23]: Սրանք աղերսներ ունեն Մոխրաբլուրի աշտարակի եւ Բեյջեսուլթանի կոթողի հետ, շատ հեռավոր հիմքեր ունենալով հնագույն Գյոբեկլիի հետ:

Ուշ բրոնզի դարում Հայաստանի տաճարը շարունակում է նախորդ ժամանակների ավանդույթները: Սրա հետաքրքիր օրինակներից մեկը Գեղարոտի սրբարանն է՝ Արագածի հյուսիսային լանջերին, ներկայիս համանուն գյուղի հարեւանությամբ գտնվող բլրի արեւմտյան դարավանդի վրա: Այն հիմնադրվել է Ք. ծ. ա. ԺԵ. դարի վերջին - ԺԴ. սկզբներին, ապա ավերվել հրդեհից եւ շուտափույթ վերականգնվելով՝ հաջորդ անգամ գործել է Ք. ծ. ա. ԺԳ. դարի երկրորդ կեսից մինչեւ ԺԲ. դ. առաջին կեսը[24]: Առաջին հրդեհից հետո սրբարանի հատակը ծածկվել էր մինչեւ 20 սմ թանձրությամբ ավերակներով՝ բաղկացած մոխրից եւ այրված գերանների մնացորդներից: Հատակին փռված էին մինչեւ 40 ջարդված խեցանոթներ, որոնցից մեկի տարողությունը հասնում էր 360 լիտրի[25]: Վերականգնելիս, մոխրից, ածխից եւ ուղեկցող բեկորներից մաքրվել էր միայն սրբարանի կենտրոնական մասը, իսկ շուրջը ծառայել էր յուրահատուկ շինարարական հենք՝ սուբստրուկցիա, նոր հորիզոն ստեղծելու համար:

Այս կենտրոնը մի «կավածեփ կլորավուն ավազան-զոհասեղան էր, որը կրակից ամբողջովին թրծվել էր»[26]: Տվյալ զետեղարանի արեւելյան, այսինքն ճակատային, մասում կանգնեցված էր մի աստիճանավոր քարե զոհարան, իսկ նրա դիմաց նույն ավազանի մեջ ամփոփված էին կավե բուրանոթներ՝ հար եւ նման Միջին բրոնզի դարի համալիրներից գտնվածներին: Ուղեկցող նյութի տեսականին այս ավազանում բազմազան է եւ կարող է լուսաբանել ծեսի ընթացքում կիրառված պիտույքների կազմը: Դրանք են. կավե զույգ պատվանդան-կուռքեր, քարե մի կախիկ, սարդիոնից պատրաստված 55 ուլունքներ, ոսկրե գործիքներ եւ զարդեր, եղջերուների աղոցված եղջյուրներ, խոշոր եղջերավոր անասունների ճաներ, բրոնզից շքասեղ եւ ապարանջան, քարից կաղապար եւ կավե հալոց:

Մյուս մանրամասը սրբարանի շուրջ հատակի մեջ առանց կարգի փռված մինչեւ մեկ մետր տրամագիծ եւ 46 սմ խորություն ունեցող փոսերն են՝ ակնհայտորեն լցված մոխրով: Այս հորիզոնի խոշոր պատերը ներկառուցվել էին հին սենյակի մեջ արեւելքից եւ հարավից, վերը նշված ավերակների վրա: Սրանից նախորդի համեմատ նոր սրբարանը

22 Տե՛ս **Կ. Խ. Կուշնարева,** *Древнейшие памятники Двина,* Ереван, 1977, էջ 48:

23 Տե՛ս **И. И. Мещанинов**, *Краткие сведения о поездке археологической экспедиции в Нагорый Карабах и Нахичеванский край.* "Сообщения ГАИМК", в. I, Л., 1926, նկ. 5. **К. Х. Кушнарева,** *Археологические работы в 1954 г. в окрестностях села Ходжалы*, МИА, թ. 67, նկ. 7:

24 Տե՛ս **Р. Бадалян, П. Аветисян, А. Смит**, *Святилище позднего бронзового века Гехарота.* «Վիճ Հայաստանի մշակույթը». XIII, Երեւան, 2005, էջ 110 եւ աղյուսակ I.1:

25 Տե՛ս անդ, էջ 111:

26 Տե՛ս անդ եւ աղյուսակ I.2,3:

ավելի էր սահմանափակվել, կազմելով մոտ 6.5 x 5.6 մետր մակերես: Հետաքրքիր է սրբարանից ավելի ցածր մակարդակի վրա փաշված մյուս դարավանդից գտնված 6.6 սմ բարձրությամբ կավե արձանիկը. այն հիշեցնում է մարդանման էակի՝ ուսերին եւ գլխին զոհաբերված ցլի եղջյուրներով կաշվով, եղջյուրների հետ միասին եւ երկու կնիք[27]:

Թեեւ Մերձավոր Արեւելքում հնագույն հասարակության զարգացման գործընթացը փոխկապակցված տեղի էր ունենում նրա բոլոր տարածաշրջաններում, սակայն Ք. ծ. ա. Զ. հազարամյակից՝ քաղաքակրթության հիմքերի ձեւավորումն առաջինը ավարտվեց Միջագետքում, որն իր հետ բերեց բնակչության չտրեսնված չափերի կուտակում խոշոր կենտրոններում՝ քաղաքներում, եւ նրանց պահանջները բավարարելու համար մոնումենտալ կառույցների ստեղծում:

Ելակետում, Զ. հազարամյակի վերջում - Ե. սկզբին, ունենալով համեստ չափերի տաճարներ, ոչ ավելին քան երեք քառ. մետր (Էրեդուի XVI շերտ), աստիճանաբար այն ցուցաբերում է մեծացման միտումներ: Շատ կարեւոր է, որ շենքը ավանդաբար կառուցվում ու վերակառուցվում է նույն տեղում, բարձրանալով նախորդի հիմքերի վրա. Էրեդուի ժա-թ շերտերում տաճարը երկու անգամ վերակառուցվում է: Սա մի ուշագրավ փաստ է, որից զանազան գիտնականներ արել են հետեւություններ այն մասին, որ դարեր շարունակ, մի հնագիտական շերտից մյուսը՝ նույն տեղում աննշան վերակառուցումներով նորոգված շենքերը որպես կանոն իրենց նշանակությամբ պաշտամունքային են[28]:

Էրեդուի XVI-VI շերտերում (Ք. ծ. ա. ՏԶ.-ՎԾ. դդ.) ամրագրվում են նախորդ ժամանակաշրջանից եկող հիմնական հորինվածքային սկզբունքները եւս: Աղյուսաշեն տաճարի պատերը դրսից ամրակայվում են ռիթմիկ կրկնվող որմնամույթերով: Տաճարի մուտքը նախկինի պես երկայնական պատերից մեկի անկյունում է բացված, սակայն արդեն լայնակի պատի մեջ բացված է լրացուցիչ՝ արարողակարգի պահանջները բավարարող նոր մուտք: Այս մուտքի դիմաց՝ հակադիր պատին, արված է մի խորշ, որի մեջ կանգնեցվում էր կուռքը կամ աստվածության մարդանման արձանը, իսկ նրա ոտքերի առաջ դրվում էր զոհասեղանը: Շենքի կենտրոնում կանգնեցված էր նվիրատվությունների սեղանը, որի բարիքներից օգտվելու էին արքան, քուրմերը եւ տաճարական անձնակազմը[29]: Ընդհակառակը, զոհասեղանի վրա դրված զոհերը նախատեսված էին աստվածների համար, եւ «աստվածները պարբերաբար համտես էին անում ուտեստներ... հայտնվելով սեղանի շուրջ՝ բացված իրենց պատկերների մոտ»[30]:

Նշված միջագետքյան սկզբունքները, ըստ էության խորթ չլինելով հարեւան տարածաշրջաններին, մասնավորապես հին Հայաստանին, միահյուսվելով տաճարական մոնումենտալ ճարտարապետության հետ, ներգործում են դեռ երկար ժամանակ ցեղապետությունների մակարդակին մնացած հասարակությունների վրա:

Պղնձի եւ երկաթի հանքերը Հայաստանի ցեղերին տրամադրում էին բոլորովին

27 Տե՛ս **Р. Бадалян, А. Смит.** *Поселение Гехарот: новые результаты раскопок 2005-2006 гг.*«Հին Հայաստանի մշակույթը». XIV, Երեւան, 2008, էջ 54-57, էջ 65, աղ. V. 2, 13 եւ 14:

28 Religion in the Emergence of Civilization.- Catal Hoyuk as a Case Study. Ed. by Ian Hodder, Cambridge, (Cambridge University Press), 2010.

29 Տե՛ս **Сетон Ллойд**, *Археология Месопотамии,* М., 1984, էջ 46-47:

30 Տե՛ս **H. W. F. Saggs**, *The Greathness That was Babylon,* London, 1962:

նոր որակներ ունեցող, կաղապարների մեջ նպատակահարմար ձեւեր ստացած ամուր գործիքներ ու զենքեր: Նոր տեխնոլոգիաների կիրառման ասպարեզում միահյուսվում էին ուշ նախնադարի գիտությունը, արվեստն ու պաշտամունքը: Հումքի արտահանումը դեպի Միջագետք, այնտեղից Հայաստան էր բերում քաղաքակրթության նոր բարիքներ, անձնական իրեր ու արվեստի գործեր, որոնց սպառողների մի մասը Հայաստանի տաճարներում ապրող ասպվածներն էին: Այստեղից՝ Հայաստանի հնավայրերում հանդիպող օտարածին կնիքները եւ այլ գեղեցիկ իրեր:

Դվինի սրբարանները, որոնք երեւան եկան Վաղ երկաթի դարաշրջանում՝ Ժ.-Ը. դդ., համատեղում էին դարբնոցն ու տաճարը. այս համալիրի շինություններում էր, որ ստացվում էին երկաթե զենքեր եւ գործիքներ: Դարբինն էլ քուրմ-արհեստագործ էր, կանգնած հասարակական սանդղակի վերնամասում:

Դվինում պեղված վաղ երկաթի դարի սրբարանները լավագույնս լուսաբանում են նախահայերի պաշտամունքային կառույցների ճարտարապետական տեսքը, ինչպես նաեւ պաշտամունքի առարկա հանդիսացող ուժերի ընտրանին: Սրբարաններից առաջինը բացվել է հյուսիսից հարավ ձգվող պատի մի կողմում. այս պատի հարավային ճակատին կառուցվել էր գրեթե երկու մետր երկարությամբ եւ քառորդ մետր բարձրությամբ մի լայն աստիճան, որի վրա կանգնեցված էր կավից պատրաստված պատկերազարդ սրբազան կոթողը: Այս քառակուսի՝ 55 սմ երկարություն եւ նույնքան լայնություն ունեցող ճակատով, 7 սմ հաստությամբ զոհասեղանի վրա ծեփված էին վերադիր երեք հիմնական հորիզոններով ներկայացված պատկերներ. ինը երկնային ոլորտներ եւ նրանցից վեր գտնվող նժույգներ ու հնագույն աստվածների ոճավորված գլուխներ[31]: Զոհասեղանից քիչ հեռու՝ պատի մեջ արված էր 145 սմ բացվածքով մի որմնախորշ, որի բարձրությունը անցնում էր 70 սմ-ից: Խորշում դրված էին զանազան ծիսական խեցանոթներ, բրոնզից եւ երկաթից նետասլաքներ, բրոնզե նուրբ օղակմատանի, պղնձից ձողիկներ: Պատի դիմաց՝ զոհասեղանից 2 մետր արեւմուտք երկու միմյանց վրա դրված քարի սալերով պատրաստված էր գնդան[32]:

Մյուս՝ առաջինից 19-20 մ դեպի արեւմուտք գտնվող, սրբարանում կրկին ուղղաձիգ կանգնեցված էր զոհասեղանը, այս անգամ երեք գերէակների գլուխներով, ջրային խորհրդանշաններով, օձով եւ լուսատուներով: Ընդ որում՝ վերադիր շերտի ծեփը թափվելիս երեւակեց ուղղաձիգ առանցքով եւ նրանից աճող հինգ ճյուղերով պատկերված նախնական զոհասեղանի ճակատը: Կոթողի առաջ քարերից շարված կիսաշրջանաձեւ զետեղարան-զոհարան էր, կենտրոնում պատվանդանի վրա ծիսական անոթներ եւ հաստ մոխրաշերտ: Քիչ հեռու՝ հատակի մեջ փոս էր, մոխիրը հավաքելու համար:

Այս երկրորդի հարեւանությամբ գտնվեց երրորդ սրբարանը: Մոտ 22 քառ. մետր մակերեսով սենյակի հատակին փորված էր մի ուրիշ փոս: Այստեղ էլ մոխրոտ փոսի մեջ դրված էին աղորիքի մի տափակ քար եւ այրված խաղողի ընձյուղներ: Հարեւան փոսում զույգ կավե թասեր էին եւ երկու պուլիկ: Զոհարան-կոթողի ճակատին՝ յոթ

31 Տե՛ս **Կ. Խ. Կուշնարեվա**, *Դրեւնեյշիե պամյատնիկի Դվինա,* էջ 50:
32 Տե՛ս անդ, էջ 12-13:

մարդանման էականերից ներքեւ երիգներ էին, լուսապտուներ եւ նրանց միջով գալարվող օձը, ապա երկնային ջրեր ու թերեւս մշակված հողակտորներ: 51 սմ լայնությամբ եւ 62 սմ բարձրությամբ ծեփածո հեթանոսական սրբապատկերի շուրջ դրված էին եղել կճուճներ՝ ցուլի ոճավորված վերադիր գլուխներով, մոտ քսան նրբախեցի պուլիկներ, մարդու եւ թռչնի համադրությամբ գերէակի կավե արձանիկ[33]: Խեցեղեն իրերի մի մասն էլ տեղավորված էր պատի մեջ արված խորշի ներսում: Այս սրբարանին հարում էր մի փոքր կառույց, հավանաբար, մառան: Հրդեհից առասպաղն իր եղեգնյա ծածկույթով փլվել ու ընկել էր հատակի վրա՝ ճզմելով ընտանի զանազան կենդանիների մնացորդները, ոչխարի վերջույթներից սարքած ճաները, անվի կավե մանրակերտը, բրոնզե զանգակը, եղջերուի եղջյուրները, ապարանջանները: Ակնհայտորեն, բեկորված անոթների մի մասի մեջ հրդեհից առաջ դրված էր եղել կենդանիների միս:

Առաջին երկու սրբարանների միջեւ կառուցված էր մեսրաղազորձական արհեստանոց: Չորրորդ սրբարանն էլ կործանվել էր հրդեհից: Այն հավանաբար նվիրված էր եղել ասպվածային գերագույն եռյակին[34]:

Սրբարաններ էին կառուցված ինչպես միջնաբերդի վրա, այնպես էլ նրանից ներքեւ եւ հարավ-արեւմուտք՝ Կենտրոնական թաղամասում: Հինգերորդ սրբարանից էին հանվել մի այլ կավե սրբապատկերի մասեր, որի առաջ ավանդական կիսաշրջանաձեւ սեղան էր կառուցած: Եւս մի, արդեն վեցերորդ սրբարան էլ գտնվում էր Դվինի կաթողիկե եկեղեցուց հյուսիս՝ Ք. հ. Զ. դարի կաթողիկոսական պալատի ընդերքում[35]: Այստեղ՝ սրբապատկերի առաջ, մեծ անոթի մեջ գտնվում էին գարու եւ ցորենի այրված հատիկներ:

Հնաբերդ գյուղի պետական բանջարանոցից ներքեւ որոշ խորության վրա, Կենտրոնական թաղամասից մոտ 100-150 մ հեռու, գտնվեց յոթերորդ սրբարանը: Ուշագրավ է, որ հեթանոսական զոհասեղան-սրբապատկերների կամ նրանցից մնացած բեկորների թիվն արդեն անցնում է քսանվեցից, որ վկայում է Դվինում վաղ երկաթի դարում մի գլխավոր տարածաշրջանային պաշտամունքային կենտրոնի գոյության մասին[36]:

Առանձնակի են **Մեծամորի** յոթ տաճարները, որոնք կանգնած էին միջնաբերդի ստորոտից մինչեւ գագաթը կառուցված երեք հաջորդական դարավանդների վրա: Մոտ 40 քառ. մ մակերեսով սրբարանները, ծիսական խորշերը եւ դեպի այս շենքերը տանող աստիճանները փորված էին ժայռի մեջ: Բարդ զոհարաններն ու նվիրատվության հարթակները կապված էին ջրի եւ պտղաբերության պաշտամունքի հետ: Սրբարան-սենյակների գլխավոր մասում պատի առաջ կառուցված էին կավածեւի բարդ կառուցվածք ունեցող, կարծես դեպի երկինք ուղղված ձեռքեր հիշեցնող մանրամասերով մարդանման խիստ ոճավորված զոհասեղաններ: Դրանց առաջ կիսաշրջանաձեւ ավազանների եւ կլոր օջախների կասկադ էր՝ եզերված սյունակնե-

33 Տե՛ս անդ, էջ 16, 63:

34 Տե՛ս անդ, էջ 17:

35 Տե՛ս անդ, էջ 36:

36 Պեղումներից գտնված զոհարան-կոթողների ներկա քանակի վերաբերյալ փվյալները մեզ բանավոր հաղորդել է հանգուցյալ Արամ Քալանթարյանը:

րով: Գրեթե բոլոր կառուցվածքների վերնամասերն ավարտվում էին պնակներով՝[37] առնչվելով անձրև կանչելու ծեսին: Ջոհասեղանների կողքին ձվածիր ամբարներ էին՝ բերքն ու անասունը ապրվածներին զոհելու եւ երկնային ու ստորգետնյա ուժերից նոր, ավելի առատ արդյունքներ ակնկալելու համար: Մուտքից աջ եւ ձախ սրբարանների պատերի առաջ ավազաններ ու հարթակներ էին՝ զոհաբերված կենդանիների եւ բույսերի տեղադրման համար, իսկ այս կառույցների եզրերին շարքերով ներդրված էին պնակներ՝ հեղուկ լցնելու համար: Գետնին աղորիքներ էին եւ հացահատիկով լի խեցեղեն անոթներ, վեր բարձրացող յոթ եղջյուրներով կավե կեռնոս, ծիսական հացի վրա խորհրդանշաններ դաջելու համար նախատեսված կնիքներ: Անոթների վրա վերադիր զարդերով պատկերված էին թռչնագլուխ օձեր, հացահատիկի եւ ջրային շիթի նշաններ: Նման նյութերով են հարուստ նաեւ Անդրկովկասի հարեւան տարածքներից պեղված Ք. ծ. ա. Բ. եւ Ա. հազարամյակների սահմանագլխով թվագրվող այնպիսի հնավայրեր, ինչպես Կաթնալիխեւին, Խովլեն, Նացառզորան, Մելի-գելեն, Սարի-թեփեն եւ Բաբա-դերվիշը, որոնց մի մասին կանդրադառնաք ստորեւ:

Բացառիկ կարելի է համարել Մեծամորի մարդանման կավե արձանիկը՝ շեշտված արեգակնային նշաններով, եւ քառակող տուփե բարձր կուռքը, որը կանգնեցված պեպք է լիներ նշված սրբարաններից մեկում, իսկ նրա ստորին մասում արված օղակաձեւ բացվածքներից կապվելու էին զոհաբերվող կենդանիներ[38]:

Մեծամորի միջնաբերդին հարեւանող ժայռազանգվածի վրա փորված հարթակն իր ցուցիչներով նախատեսված էր ասպղերի պաշտամունքի, լուսատուների շարժումը ուսումնասիրելու, տոմարական հաշվարկներ կատարելու համար: Միջնաբերդում հորիզոնական տաշված ընդարձակ ժայռահարթակի վրա պատկերված էր Արագածի լանջերից իջնող գետերի ու առվակների քանդակազարդ մանրակերտը, որին հնագույն երկրագործները զոհեր էին մատուցում իրենց վերարտադրած բույսերից եւ ընտանի կենդանիներից:

Մեծամորի սրբվայրին նման է Աղստեւ գետի ավազանում՝ Սարի-թեփեում, բացված սրբազան համալիրը: Այստեղ էլ կան պնակներ՝ գինու կամ ջրի հեղման համար: Բազմաթիվ են նաեւ արեւային խորհրդանշաններով կնքադրոշմները[39]:

Նշված մի մեծ շարք հնավայրերում տեսանելի են բարդ կառուցվածք եւ մեծ չափեր ունեցող զավառային կամ անգամ քաղաքային սրբարաններ, կանգնած բնակավայրերից մեկուսի: Սրանց, անշուշտ, նախորդել եւ բոլոր ժամանակներում հարատեւել են տնային սրբազան անկյունները, որոնք նախատեսված էին ընտանիքի նախնիների եւ տան ուրիշ պահապան ուժերի պաշտամունքի համար: Այս փոքր չափերի պաշտամունքային համալիրները, ի տարբերություն վերոհիշյալ պետական սրբարանների, որ

37 Տե՛ս **Է. Վ. Խանզադյան, Կ. Ն. Մկրտչյան, Է. Ս. Պարսամյան,** Մեծամոր, Երեւան, 1973, էջ 111, նկ. 110 եւ էջ 114, նկ. 113:

38 Տե՛ս անդ, էջ 135-140, նկ. 142-43 եւ 137-141:

39 Տե՛ս **И. Г. Нариманов**, *Древнее святилище (пир) в Казахском районе позднебронзового периода. "ДАН Азербайджанской ССР",* т.XVI, 1960, էջ 207.**В. Алиев**, *Археологические раскопки в урочище Баба-дервиш. "Советская археология",* 1971, թ. 2, էջ 226. **И. Г. Нариманов**, *Глиняные штампы из западного Азербайджана,* Баку, 1973, МКА, VII, (աղբրեջաներեն):

սպասարկվում էին ավազանու կամ անգամ մասնագիտացած քուրմերի կողմից, սոսկ ապահովում էին ներընկրանեկան պահանջները: Տեսականորեն այսպիսի բազմաթիվ սրբազան անկյուններում պետք է մշակվեր զոհասեղանի, այն հատակից բարձրացնող աստիճանի կամ հարթակի, դրա վրա կամ շուրջ դրվելիք ծիսական անոթների, զանազան մասունքների եւ նվիրատվությունների տեսքն ու տեսականին: Եւ այստեղից պետք է տարածվեր բացօթյա սրբավայրերի վրա, դրանք առնելով տանիքի մեջ:

Վերը բերված եւ այլ օրինակներում ոչ բոլոր սրբարաններն են, որ անվիճելիորեն նույնացվում են բնակելի համալիրներից օտարված եւ պետական նշանակության հասած տաճար-սրբարանների հետ: Այս երկու բեւեռային օրինակները տարբերվելու էին նախ իրենց մասշտաբներով: Բացի այդ, տաճարները այնքանով կարող էին հանդուրժել կենցաղային տարբեր, որ տիպիկ է բնակելի տանը, որքանով որ դրանք ծառայում էին սրբազան կիզակետին, սպասարկել նրան եւ նրա քրմական անձնակազմի նյութական անհետաձգելի պահանջները: Սակայն այս «աշխարհիկ» կառուցվածքներն էլ, պահեստներ, սեղանատներ, գոմեր, ջրավազաններ, փոխադրամիջոցներ եւ այլն, ոչ նշանակությամբ, բայց տարածական առումով պետք է գրավեին տաճարական համալիրների լուսանցքները՝ իրենց հերթին ընդգծելով բարձունքը գրավող սրբազան կենտրոնի տեղն ու դերը:

Հետեւաբար, քանի դեռ մի շարք վերին ատիճանի հետաքրքիր ու կարեւոր հնավայրերի սրբազան սենյակները կամ անկյունները շրջապատող շինությունները լրիվ կամ մեծ մասամբ չեն բացված, չենք կարող աներկբայորեն պնդել, թե դրանք բնակավայրի համար առանձին կառուցված տաճարներ են կամ ընդհակառակը՝ տեղային փոքր սրբարաններ:

Թե ինչպիսին էին ընտանեկան սրբարանները, երեւում է նախաուրարտական Կարմիր բլուրից: Յուրաքանչյուր տան գլխավոր սենյակում մի պատի առաջ դրված է ձեռքերը երկինք պարզած ոճավորված կուռքը. նրա մարմինը ծածկված է բուսական զարդերով: Կուռքի դիմաց փորված է հացահատիկի հոր կամ դրված է հացահատիկով լի խեցանոթը[40]:

Ք. ծ. ա. Բ.-Ա. հազարամյակների սահմանագլխի խոշոր համայնական սրբարանների մասին կարող են տվյալներ հաղորդել Կուրի ավազանի մի շարք հնագույն կենտրոններ: Կուր գետի ձախափնյա բլրակներից մեկի գագաթին հիմնած Դաթնալի-խևին մասամբ նմանվում է Մեծամորին: Մոտ 70 քառ. մետր ընդհանուր մակերեսով շինությունները առնված են չորս հաղորդակից սենյակների մեջ՝ դառնալով ցուլի և վարազի պաշտամունքին նվիրված մի տաճար: Արևմուտքից շենքերի առաջ բակ էր, իսկ շենքերը արևելյան կողմից բաց էին հաճախորդների համար: Սենյակներից առաջինում գտնվել են կենդանիների և մայր աստվածուհու արձանիկներ, կնիքներ, անվակ, քարե ֆալլոսներ: Երկրորդում հացահատիկով կամ մոխրով լի հորեր են, աղորիքներ, մանգաղներ, նուրբ խեցանոթներ, վարսանդներ և անոթների մեջ պահպանված խաղողի կորիզներ: Երրորդում հաց թխելու վառարան է և խաչաձև աթոռանման զոհասեղան: Վերջին՝ չոր-

40 Տե՛ս **Ա. Ա. Մարտիրոսյան**, *Идолы из раскопок Кармир-блура*. "Историко-филологический журнал", 1958, թ.2, էջ 114-139.**Ա. Ա. Մարտիրոսյան**, *Город Тейшебаини*, Ереван, 1961, էջ 69:

ռորդ սենյակում դրված էր ցուլի գլխով զարդարված մի կլոր զոհասեղան, սրա առաջ՝ մի ցածր սեղան, ապա մոխրով լի փոս[41]: Կավե հատակին պատկերված էին կենդանիներ, նրանց վրա լցված էին կենդանիների ոսկորներ և մոխիր:

Առանձին պաշտամունքային կառույցներ են եղել սրբազան հարթակները: Հայկական լեռնաշխարհի մեջ հյուսիս-արևելքում առնված Կախեթի տարածքում սրանց օրինակները բացվել են Մելի-գելե-II վայրում, որը հաջորդել է տեղում գտնված Մելի-գելե-I-ին, և Մելաանի հնավայրում: Բոլորն էլ գտնվում էին բնակավայրից մեկուսի: Մելի-գելե-I-ը 90 մ տրամագծով հսկա ծիսական հարթակ էր, շրջապատված իր ժամանակ ջրով լցված խանդակով: Մյուս օրինակում՝ հարթակը շրջապատում էր մի քանի համակենտրոն շարք ցանկապատ, իսկ այս և մյուս հարթակների կենտրոնում պետք է որ դրված լինեին զոհասեղաններ և սրբազան խորհրդանշաններ կամ ուղղակի կուռքեր: Տպավորիչ է զոհաբերված նյութը. կենդանիներից բացի Մելի-գելե-I-ում գտնվել է զոհած 86 հազար առարկա, իսկ Մելաանիում պեղվել է մոտ 1000 խեցանոթ[42]:

Հարթակների մասին պատկերացումներ են տալիս նաև ժամանակակից Հայաստանից և Վրաստանից գտնված սրբարանների մանրակերտները[43]: Դրանք ունեին հատուկ ձևավորված դարպասներ, որոնցով մուտք էին գործում դեպի սրբազան տարածք:

Թե ինչ կարգի ծեսեր ու արարողություններ էին իրականացվում բաց եւ ծածկի տակ առնված շենքերում կամ նրանց բակերում, հնարավոր է միայն մասամբ իմանալ: Այս առումով, բրոնզեդարյան խեցեղենն ու գեղարվեստական մետաղը անսպառ աղբյուր են հնագույն Հայաստանի հավատալիքներն ու կրոնը լուսաբանելու համար: Այստեղ արտահայտված են երկնքի ոլորտները, երկնային ջրերը, լուսատուները, աշխարհի շերտերը խորհրդանշող կենդանիները, լեռներն ու մշակովի հողը, երկրի ջրային պաշարներն ու ընդերքը: Որոշ զարդանախշեր ներկայացնում են բավական բարդ գաղափարներ, ինչպես, օրինակ եռամիասնություն խորհրդանիշը:

Հայաստանի լեռներում, սկսած առնվազն Ե. հազարամյակից մինչեւ Ա.-ի կեսերը-, տարածված էին յուրատիպ պաշտամունքային համալիրներ՝ ժայռապատկերներ, որոնք բարձրլեռնային բացօթյա սրբարաններ էին: Կարծր ժայռաբեկորների ամփոփ խմբեր այսօր էլ կարելի է տեսնել Սեւանա լճի ավազանում՝ Գեղամա եւ Վարդենիսի լեռնաշղթաների շուրջ յոթանասուն կետերում, Սյունիքում, Արագածի փեշերին, Ճորոխի ավազանում, Վասպուրականի, Կորդուքի եւ Մոկսի լեռներում[44]: Այստեղ վերարտադրված

41 Տե՛ս **Д. А. Хахутайшвили**, *Уплисцихе*, Тбилиси, 1964, էջ 16 (վրացերեն):

42 Տե՛ս **К. Н. Пицхелаури**, *Основные проблемы истории племен восточной Грузии.* "Автореферат дис.", Тбилиси, 1972, էջ 66. **К. Н. Пицхелаури**, *Основные проблемы истории племен восточной Грузии*, Тбилиси, 1973, աղ. XXIII-XLV (վրացերեն):

43 Տե՛ս **С. А. Есаян**, *Бронзовые модели культовых площадок древней Армении.* "Советская археология", 1971, թ. 1, էջ 205. **Д. Л. Коридзе**, *Позаботимся о защите случайно обнаруженных археологических памятников.* "Друзья памятников культуры", Тбилиси, 1969, թ. 15, էջ 82 (վրացերեն):

44 Տե՛ս **Գ. Հ. Կարախանյան, Պ. Գ. Սաֆյան,** Սյունիքի ժայռապատկերները. «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 4, Ժայռապատկերներ, պրակ I, Երեւան, 1970: **Հ. Ա. Մարտիրոսյան, Հ. Ռ. Իսրայելյան**, Գեղամա լեռների ժայռապատկերները. «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 6, Ժայռապատկերներ, պրակ II, Երեւան, 1971: **Հ. Ա. Մարտիրոսյան**, Գեղամա լեռների ժայռապատկերները. «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 11, Ժայռապատկերներ, պրակ III, Երեւան, 1981:

կենդանիները, մարդանման էակները, լուսապուները, բույսերը, խորհրդավոր բազմաթիվ պատկերները կապող օղակ էին գերբնական ուժերի եւ մարդկանց աշխարհի միջեւ: Ուշագրավ է, որ ժայռապատկերներում հաճախակի կրկնվում են ժողովրդի կողմից իծագրեր կոչված նշանների մեծ խմբեր, թույլ տալով դրանք դիտել որպես գաղափարագրեր: Այս հրաշալի հուշարձանները պատկանում են քաղաքակրթության առաջին քայլերը կատարող հասարակությանը, որի մշակույթում դեռեւս չէին տրոհված եւ միասնության մեջ էին հանդես գալիս գիրը, արվեստը եւ սրբազան իրը: Մշակույթի հիմքերում տեղ գտած ժայռապատկերների խորհրդավոր զարդանախշերի մի շարք դրսեւորումներ կայուն վերարտադրվում են հայկական ավանդական գորգերում, փորագրած փայտի պահպանակներում եւ ասեղնագործ ծածկոցների, թաշկինակների, սրբիչների ու գլխաշորերի զարդարվեստում:

Արդեն Բ. հազարամյակում՝ Հայաստանի կրոնական գաղափարահիմնության ակունքներում, սկսվել էր կենդանակերպ ու բուսակերպ գերէակների մարդակերպացման գործընթացը: Այն զուգահեռ վերարտադրված է ինչպես ճարտարապետության տարբեր տիպի ստեղծագործություններում, գեղարվեստական մետաղագործության մեջ, այնպես էլ այս լեռնային քարե կոթողների պատկերագրության մեջ: Ժայռապատկերներում կարելի է տեսնել կենդանու մեջքին կանգնած մարդանման էակների, նախնիների եւ երկվորյակների պաշտամունքն արտացոլող զույգերի, կայծակնային աղեղների հետ աճպարող մարդակերպ գերէակների: Սրանք հին հայկական պանթեոնի ձեւավորումը լուսաբանող հիանալի օրինակներ են:

Ջուրն իր կենսատու ուժով պաշտամունքի առարկա էր Հայաստանի բնակչության համար բոլոր ժամանակներում: Նրա պատվին կանգնեցրած առավել ցայտուն կոթողները քարից տաշված վիթխարի ձկնանման կուռքերն են, որոնք ինչպես նշվեց վերը, մեր օրերում ստացել են «վիշապ» պայմանական անունը: Նրանց տարածման ոլորտը գրեթե համընկնում է ժայռապատկերների հետ: Վիշապները, հորիզոնական դիրքով դրված կամ սյան նման կանգնեցված, տեսանելի են բարձր լեռներում սկիզբ առնող գետերի ակունքների մոտ եւ լճակների ու լճերի ափերին[45]: Ք. ծ. ա. Բ. հազարամյակին - Ա.-ի սկզբին վերաբերող այս կոթողներն իրենց մանրակերտ նախատիպերն ունեին Գ. հազարամյակի դամբարաններում (Մեծամոր): Հաճախ վիշապների վերնամասում պատկերված է լայն բացած երախով ջրի շիթն արտաբերող սրբազան կենդանին, որի գլխի երկու կողմերում գարնան ավետաբեր թռչունները՝ արագիլներն են կանգնած: Այս էակներից ներքեւ ջուրը խորհրդանշող կենդանու անգլուխ մարմինն է կամ նրա մորթին: Ցուլը զոհաբերվում էր հանուն առատ ջրերի, որի վկայությունը Վանաձորի, Լճաշենի, Աղիամանի եւ Թռեղքի դամբարաններում գտնված ցուլի գլուխներն են, վերջույթները եւ կաշին, որ զուգահեռներ ունեն Ամիրանիս-գորայի որոշ դամբարան-

45 **Գ. Ն. Կարսխանյան, Պ. Գ. Սաֆյան,** Սյունիքի ժայռապատկերները. «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 4, Ժայռապատկերներ, պրակ I, Երեւան, 1970: **Ն. Ա. Մարտիրոսյան, Ն. Ռ. Իսրայելյան,** Գեղամա լեռների ժայռապատկերները. «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 6, Ժայռապատկերներ, պրակ II, Երեւան, 1971: **Ն. Ա. Մարտիրոսյան,** Գեղամա լեռների ժայռապատկերները. «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 11, Ժայռապատկերներ, պրակ III, Երեւան, 198I:

ներում[46]: Ուշագրավ է այն վերականգնումը, համաձայն որի, վիշապի կոթողները դիտված են երկնային արարածների սուրբգպտներ եւ դամբարաններում հանդես են եկել «որպես համարձող»-ներ[47]: Ուշագրավ է, որ «վիշապները»՝ որպես բացօթյա սրբազան տարածքի կիզակետեր, պատրաստվում էին հազարամյակներ անց այն բանից հետո, երբ Հայաստանում արդեն ձեւավորվում են ծածկի տակ առնված կառույցներ՝ նվիրված ատրվածների ու մեռած նախնիների պաշտամունքին:

Արեւմտյան Եւրոպայում նախնադարում տարածում գտած մեծ անտաշ քարե սյուներից կազմված, զուգահեռ ձգվող մեգալիթների շարքերը իրենց հաստատուն տեղն ունեին Հայաստանում ամենաուշը Գ. հազարամյակից սկսած: Սրանք զարգանալով դեռեւս Է.-Դ. հազարամյակներում ծագած առանձին կանգնեցված վիթխարի ժայռերի ժլատ մշակված մոյթերից՝ մենհիրներից, վերածվեցին ուղղագիծ կամ բոլորաձեւ դրված սյունաշարերի բարդ համակարգերի, յուրահատուկ բացօթյա սրբարանների: Դատելով համեմատական նյութից (Սթոունհենջ, Վուդհենջ, Կառնակ), սրանք կապված էին նախնիների եւ լուսատուների պաշտամունքի հետ, իսկ նրանց մի մասն էլ կիրառվում էր տոմարական հաշվարկներ կատարելու համար (Զորաց քարեր, Աշոցք, Կապս, Հարթաշեն): Արեւմտյան եւ հարավային Եւրոպայում ներկայումս հայտնի են հարյուրավոր նախնադարյան մոնումենտալ հուշարձաններ, որոնցով հետեւում էին երկնային լուսատուների շարժմանը եւ դրանք կապում օրացուցային առանցքային օրերի հետ: Հատկապես նոր հայտնագործությունը՝ արված Հալլե-Վիտտենբերգի մոտ (Գոզեկի ասպղադիտակը՝ ի հայտ եկած 1991 թ. եւ պեղված 2002-ին), որ թվագրված է Ք. ծ. ա. 4900 թվականով, եւ նրանից 25 կմ հեռավորության վրա գտնված «Ներուլայի» սկավառակը, մի անգամ եւս վկայում են Հայաստանի վերոհիշյալ մեգալիթների եւրոպական հուշարձաններին համարժեք գործառական նշանակության օբյեկտիվ հիմքերի մասին[48]:

Նշված փաստական նյութը լավագույնս լուսաբանում է, թե հին Հայաստանում ինչպիսի ժառանգություն էր ստեղծված պաշտամունքային ճարտարապետության բնագավառում նախքան երկիրը միավորվելու էր մի հզոր պետականության սահմանների մեջ:

Վանի թագավորությունը՝ համակարգելով անցած հազարամյակների ավանդական մշակույթը, նոր շունչ հաղորդեց նրան՝ ներառելով մի կուռ համակարգում: Պետական մարմիններում, տնտեսության եւ գաղափարախոսության մի շարք բնագավառներում Մենուայի իրագործած բարեփոխումները շոշափեցին նաեւ հավատալիքները, կրոնն ու պաշտամունքային ճարտարապետությունը: Ամենուրեք, որտեղ կհասներ կենտրոնական իշխանության ձեռքը, հին կուռքերը, բացօթյա սրբատեղիներն ու վաղերկաթեղարյան

46 **Է. Վ. Խանզադյան,** Լճաշենի № 6 կուրգանը. «Տեղեկագիր», 1960, թիվ 2. **Т. Н. Чубинишвили,** *К древней истории Южного Кавказа,* Тбилиси, 1971, էջ 10:

47 Տե՛ս **Ալբրպեկ.** Վիշապազանց պաշտամունքը. «Բազմավէպ», 1931, թ. 7-8, էջ 31: Նույնի, Լճաշենի վիշապը. «Հին Հայաստանի մշակույթը», XIII, Երեւան, 2005, էջ 91:

48 Խնդիրը դեռեւս կարոտ է լուրջ ուսումնասիրության՝ հնագերեզմանների եւ բնական գիտությունները ներկայացնող գիտնականների համատեղ ուժերով:

տիպի տաճարներն ու ծեսը նահանջում էին նորաստեղծ կրոնական կաղապարների առաջ:

Ընդհանուր ստանդարտների էին հանգեցվում նաև տաճարական շինությունները, ստանալով նոր ծավալատարածական լուծումներ: Այս ժամանակ ձևավորված հնագույն պանթեոնը բաղկացած էր շուրջ յոթանասուն աստվածներից, որոնք կազմում էին զույգեր: Աստվածությունների այս ընտրանին, համաձայն Մհերի դռան արձանագրության (Արգիշթի Ա.-ի տարեգրության) ուներ եռամաս կառուցվածք: Պանթեոնի գերագույն աստվածը Խալդին էր, որի զուգակիցը Վարուբանի աստվածուհին էր: Գերագույն եռյակի հաջորդ աստիճանին կանգնած էր Որոտի աստված Թեյշեբան կնոջ՝ Խուբայի հետ: Երրորդն Արևի աստված Շիվինին էր, որի կինը Տուշպուեան՝ Վան քաղաքի հովանավոր աստվածուհին էր[49]: Խալդը պանթեոնում ներկայացված էր նաև իր զանազան դրսևորումներով (Խալդի Ջենքը, Աստվածայնությունը, Մեծությունը կամ Պատկերը)[50]: Երկրորդ խմբում ընդգրկված էին վեց զույգ աստվածներ: Չորրորդ ամենամեծ խմբում ներկայացված էին 26 զույգ կազմող աստվածություններ: Գերագույն եռյակը և աստվածությունների մեծամասնությունը անտրոպոմորֆ էին: Սակայն Վանի պանթեոնում կային նաև տոտեմական մնացուկներ, և աստվածությունների մի մասը կենդանակերպ էր (օրինակ՝ Կուեռա, Ջիուկունի): Պանթեոնում տեղ էին գտել նաև վերացական հասկացություններ, ինչպես, օրինակ, Խալդիի էպիտետները, որ վկայում է բարդ գաղափարախոսության մասին: Աստվածների մի մասը կոչված էր քաղաքների անուններով: Կային նաև Լեռների, Ծովերի և Հարթավայրերի աստվածներ:

Վանի թագավորությունում մշակված էին պաշտամունքային հաստատությունների որոշակի տեսակներ, որոնց թիվն անցնում էր մեկ դասնյակից: Խալդիին նվիրված հաստատություններից հատկապես հայտնի էին պետության տարբեր վայրերում կառուցված «Դարպասներ»՝ հարթ տաշված ճակատով ժայռեր՝ ժայռափոր կառույցներով և արտաքին բակով հանդերձ: Տաճարական շինությունները հիմնականում ունեին ուղղանկյուն հատակագիծ՝ ներսույթի երկայնական կամ լայնակի զարգացումով, կամ էլ քառակուսի աշտարակաձև հորինվածք[51]: «Արևի աստծու» ամսին ամեն տարի պանթեոնի բոլոր յոթանասուն աստվածներին մատուցվում էին որոշակի չափով սահմանված զոհեր: Պետության գլխավոր տաճարը գտնվում էր Մեծ Զաբ գետի վերին հոսանքում՝ Արդինի-Մուծաիր քաղաքում: Ինչպես և նախորդ դարաշրջաններում, Վանի թագավորության ժամանակ ևս տեսնում ենք աշտարակներ, ուղղանկյուն, սակայն հիմա տարբեր զարգացում ստացած, շենքեր, ժայռափոր կառուցներ, որոնց հարեւանությամբ արված էին սրբազան հարթակներ կամ հրապարակներ:

---

49 Տե՛ս **Գ. Ա. Ղափանցյան**, Ուրարտուի պատմություն, Երեւան, 1940, էջ 44-46: **Г. А. Меликишвили**, *Урартские клинообразные надписи,* М., 1960, թ. 27. **F. W. König**, *Die Götterwelt Armeniens zur Zeit det Chalder-Dynastie (9-7 Jahrhundert v. Chr.). "Archiv für Völkerkunde",* VIII, Vienna, 1953, էջ 142-171. **Գ. Ռմայակյան**, Վանի թագավորության պետական կրոնը, Երեւան, 1990. «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1893, թ. 8, էջ 239-240:

50 Տե՛ս **Գ. Ռմայակյան**, նշվ. աշխ., էջ 27, 28:

51 Տե՛ս **К. Л. Оганесян,** *Урартские корни древнеармянского зодчества. "Древний Восток и мировая культура",* М., 1981, էջ 90-93. **К. Л. Оганесян,** *Крепость Эребуни,* 1988, էջ 60:

Քանի դեռ Հայկական լեռնաշխարհի աստվածները չէին ներառնված մի համակարգի մեջ, նրանց զգալի մասը, պետք է ենթադրել, երկրպագվում էին բնության մեջ սփռված բազմաթիվ բացօթյա սրբավայրերում: Վիճակը սկզբունքորեն մնալու էր նույնը նաեւ Վանի թագավորության խոշոր բարեփոխումներից հետո, սակայն լեռնաշխարհի աստվածներին միավորելով մի համակարգի մեջ, առանձին վայրերում երիտասարդ կայսրությունը նրանց պիտի առներ նաեւ ընդհանուր տանիքի ներքո: Սրանով կարելի է բացատրել այն իրողությունը, որ Վանի թագավորության խոշոր տաճարները, նվիրված լինելով գերագույն եռյակի այս կամ այն աստվածությանը, առանձին բաժիններ ունեին նաեւ շատ այլ աստվածությունների պաշտամունքը իրականացնելու համար: Այլ կերպ ասած, դրանք համալիր սրբատեղիներ էին: Մի բան, որ ժառանգվեց նաեւ հին Հայաստանի հետագա դարերի կողմից:

Մերձավոր Արեւելքում Աքեմենյան տիրապետության տարիներին նոր՝ երբեմն օտարածին անունների քողի ներքո շարունակվում էր հին տեղական աստվածների պաշտամունքը մասամբ պետականորեն, մասամբ ոչ պաշտոնապես: Սակայն քաղաքական եւ հասարակական տեղաշարժերի ազդեցությամբ ձեւափոխվեցին կրոնն ու կրոնական հաստատությունները: Սա ցայտուն երեւում է Էրեբունիի միջնաբերդի տաճարների վերակառուցումների մանրամասներում: Կայսրության գերագույն աստվածությունը՝ Ահուրամազդան, պաշտամունքի առարկա էր բոլոր սատրապությունների խոշոր վարչական կենտրոններում: Շեշտված էր կրակի պաշտամունքը ատրուշաններով հանդերձ: Սրան զուգընթաց՝ հին քաղաքների կործանումով եւ հայ էթնոսի համատարած տիրապետությամբ վեր են ելնում ակունքներով Վաղ երկաթի դարից ու ավելի հեռավոր անցյալից եկող՝ ժողովրդական լայն զանգվածների մեջ ընդունված պաշտամունքային երեւույթներ, որոնք կարոտ են ուսումնասիրության:

Երվանդունի հարստության կերտած անկախ պետականության պայմաններում որոշակի տեսք է ստանում հին հայկական պաշտոնական պանթեոնը: Մասամբ հունական, ասորական եւ իրանական անունների տակ պաշտվող հայոց աստվածների գլուխ կանգնած էր Ձեւս-Արամազդը: Առավել հեղինակություն էին վայելում Անահիտ աստվածուհին, Միհր-Տիր-Ապոլլոնը, ինչպես նաեւ Վահագնը, Աստղիկը, Բալշամինը եւ Նանեն:

Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը, մասնավորապես Մեծ Հայքը, սփռված էր հազարավոր տաճարներով եւ այլ սրբավայրերով, որոնց մի մասը առնված էին պետական համակարգի մեջ: Պանթեոնը համապետական բնույթ էր կրում: Գերագույն եռյակում ընդգրկված աստվածները՝ Արամազդը, Անահիտը եւ Միհրը իշխող արքայական հարստության թագավորների հովանավորներ էին: Վերնախավի բաղկացուցիչ մասը քրմական ազնվականությունն էր, որն ուներ ընդարձակ տիրույթներ երկրի տարբեր մասերում: Դրանց արքայի կողմից հավանաբար շնորհված էր անձեռնմխելիություն, մասամբ էլ՝ հարկերից ազատում: Այնպիսի տաճարական կենտրոններ, ինչպես Արմավիրը, Բագարանը, Երիզան, պետություններ էին պետության մեջ: Տաճարների մի մասը նվիրված էր իշխող թագավորական հարստության նախնիներին: Հայոց արքան, օրինակ ինքը՝ Տիգրան Մեծը, պաշտամունքի առարկա էր դեռեւս կենդանության

օրոք: Համազգային բնույթի տաճարներն ու սրբատեղիները հասարակությունը միավորող կարեւոր գործոն էին: Հայաստանի եւ հարեւան ժողովուրդների սրբավայրերը պետական եւ ազգային սահմաններ չէին ճանաչում, ինչպես, օրինակ, Կոմանա տաճարական քաղաքը, կամ Երիզան:

Բազմաթիվ հեթանոսական տաճարներից հատկապես կարեւորվում էին պետության առանձնահատուկ վերաբերմունքին արժանացած ութ տաճարներ՝ Անիում, Երիզայում, Թորդանում, Բագահառիճում, Թիլում, Աշտիշատում, Արտաշատում եւ Երազամույն վայրում: Հայ արքայական տան հովանավոր աստվածներն էին Միհրն ու Անահիտը: Նախորդ դարաշրջաններում մշակված պաշտամունքային հաստատությունների տեսականին սկզբունքորեն ժառանգվեց անտիկ Հայաստանի պաշտամունքային ճարտարապետության կողմից, ստանալով նոր մանրամասներ: Դարերից եկող պաշտամունքի ժառանգականությունը հատկապես ցայտուն էր ժողովրդական՝ ոչ պաշտոնական հավատալիքներում եւ պարզունակ պաշտամունքային կառույցներում՝ հատկապես բաց երկնքի տակ գտնվող բագիններում եւ ժողովրդական տան ճարտարապետությունից ազդված պաշտամունքային շենքերում:

Մեր տրամադրության տակ եղած առայժմ սուղ տվյալների եւ հարեւան երկրների համեմատական նյութի օգնությամբ կարելի է թվարկել այն պաշտամունքային հաստատությունները, որոնք կազմում էին անտիկ Հայաստանի մշակութային հենքի մի էական շերտը: Դրանք էին. 1) գյուղական համայնքների տաճարները եւ 2) գյուղերը շրջապատող բաց սրբատեղիները, սրանց տարատեսակներից մեկը դամբանաբլուրներն էին, որոնց շուրջ շարունակվում էր կառուցապատումը եւ մեռածների պաշտամունքը[52], 3) առանձին քաղաքների հովանավոր աստվածներին նվիրված տաճարները, 4) գավառական կենտրոնական տաճարները, որոնք կարող էին նույնանալ նաեւ առաջին երկուսի հետ, 5) նահանգի կամ բդեշխության պաշտամունքային կենտրոնները, 6) պետական նշանակության տաճարները եւ 7) սրբատեղիները, մասնավորապես, աստվածներին եւ մեռած նախնիներին նվիրված բագինները եւ ութ գլխավոր տաճարները: Դրանց կողքին առկա էին նաեւ հնուց եկած հազարավոր կոթողներ, որոնք ներառնված էին հին հայերի պաշտամունքային համակարգի մեջ, ունենալով ավանդական նշանակություն:

Որքան էլ բերված ցանկը արհեստական ու մոտավոր է, այնուամենայնիվ, սա այն հիմքն է, որի վրա ուսումնասիրվելու են հին Հայաստանի հոգեւոր կառույցները, դասդասվելու եւ ճշտվելու են նրանց հորինվածքը, մանրամասները եւ աստիճանակարգը: Սա կպահանջի տասնամյակներ եւ գիտնականների սերտ համագործակցություն: Արդյունքում հնարավոր կդառնա տեսականորեն երեւակել հոգեւոր Հայաստանը, որը ամուր հիմք հանդիսացավ քրիստոնյա Հայաստանի կայացման, զարգացման ու հարատեւման համար:

52 Այս ավանդական տեսակի հետմահու բացօթյա տաճարներից պետք է բխեցնել այնպիսի յուրահատուկ մի պաշտամունքային հուշարձան, ինչպիսին Նեմրութ-դաղի դամբարան-տաճարն է կամ հիերոթեզիոնը: